ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ պոլիկլինիկական ծառայության բժիշկ-ուրոլոգի, տեղամասային մանկաբույժի և ուրոլոգիական կաբինետի բուժքրոջ թափուր աշխատատեղերը զբաղեցնելու համար:Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության իրավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Բժիշկ-ուրոլոգի և տեղամասային մանկաբույժի մրցույթով աշխատանքի անցնելու՝

1. պարտադիր պայմաններն են՝

ա.բժիշկ-մասնագետի համար՝ բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն.

բ. բժիշկ-մասնագետների համար հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն.

Ուրոլոգիական կաբինետի բուժքրոջ մրցույթով աշխատանքի անցնելու՝

2. պարտադիր պայմաններն են՝

ա. բուժքրոջ համար՝ միջին մասնագիտական կրթության առկայություն.

բ. բժշկական էթիկայի կանոնների իմացություն

3. լրացուցիչ պայմաններն են՝

ա. համակարգչով աշխատելու ունակություն

բ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2014թ-ի <<հուլիսի>> <<18>> -ին <<Զարիշատ(Արամ)Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքում (ք.Արմավիր, Շահումյան 3) ժամը 14 ^{00}–ին

Դիմող ՀՀ քաղաքացիները <<Զարիշատ(Արամ)Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն >> ՓԲԸ –ի կադրերի բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկից քաղվածքի (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- Ինքնակենսագրություն
- Արական սեռի անձինք՝նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք:
- Մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի
- Անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9^{00}-ից մինչև 14^{00}-ն, բացի շաբաթ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝08 հուլիս 2014թ.-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել << Զարիշատ(Արամ)Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կադրերի բաժին /ք.Արմավիր, Շահումյան 3, հեռ. 2-08-92/:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթներին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: